ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavari.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 հունվարի 2025 թվականի N 11-Ա

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գավառի համայնքապետարանի և ««ՊԱՐՏԵԶ» ՏՆԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ–ի /այսուհետ՝ Ընկերություն/ միջև 07.11.2024թ. կնքվել է ԳՄԳՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/35-1 ծածկագրով Գավառի համայնքապետարանի կարիքների համար ապրանքի մատակարարման գնման պայմանագիր, որի 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությամբ, նույն ընթացակարգի հրավերով սահմանված, պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը՝ վրաններ /այսուհետ՝ ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար»:

Հիմք ընդունելով Ընկերության կողմից 20.11.2024 թվականին ստացված գրությունը, ԳՄԳՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/35-1 ծածկագրով պայմանագրի8.5 և 8.8 կետերի պահանջները՝ 27.11.2024 թվականին Գավառի համայնքապետարանի և ««ՊԱՐՏԵԶ» ՏՆԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ–ի միջև կնքվել է համաձայնագիր, ըստ որի Պայմանագրով սահմանված ապրանքների մատակարարման ժամկետը երկարաձգվել է 20 օրացուցային օրով և վերջնաժամկետ է սահմանվել 17.12.2024 թվականը ներառյալ:

Ընկերության կողմից չի մատակարարվել պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրով պահանջված N1/վրաններ/ չափաբաժնով նշված ապրանքը:

Գավառի համայնքապետարանի կողմից սույն թվականի դեկտեմբերի 20-ին Մ-4776 ծանուցում-հիշեցմամբ՝ էլեկտրոնային փոստի միջոցով Ընկերությանը տեղեկացվել է չկատարված և ժամկետանց պարտավորությունների մասին, սակայն Ընկերության կողմից պատասխան չի ստացվել:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը /լրիվ կամ մասնակի/, եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավել:

Գավառի համայնքապետարանը, ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ, ինչպես նաև Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջով՝ N1 չափաբաժինի մասով միակողմանի /մասնակի/ լուծել է 07.11.2024 թվականին կնքված «ԳՄԳՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/35-1» ծածկագրով պայմանագիրը:

07.11.2024 թվականին կնքված «ԳՄԳՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/35-1» ծածկագրով պայմանագրի միակողմանի /մասնակի/ լուծման վերաբերյալ ծանուցումը հրապարակվել է տեղեկագրում և ուղարկվել մասնակցին սույն թվականի դեկտեմբերի 25-ին և Պայմանագիրը դեկտեմբերի 26-ի դրությամբ համարվում է լուծված:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետով և նույն հոդվածի 2-րդ մասով, *որոշում եմ*

1. ««ՊԱՐՏԵԶ» ՏՆԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Մուրադ Սամվելի Մովսիսյանի վրա:

3. Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Գավառի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

20 __ թ. _____ ____
ք.Գավառ